

ՄԷՍՄՈՒԱՅԸ

ՀԱՎԱՏԵԱՅ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

— ԹԵՐԹԸ 1 ՂԵՆԻ ԹՈՒՂԹԻՆ —

ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԱՐԱՊ—ԹԱՊԵԱ

Այս Արապ-Թապեանի խնդիրը ատենէ մ'ի վեր է որ քաղաքական խնդրոց ներկայ կացութեան մէջ կարեւոր և ուշադրութիւն հրաւիրող տեղ մը բռնած է :

Վերջերս հեռագիր մը կը ծանուցանէր թէ Ռուսիա փոխարինութիւն պահանջելով Ռուսմանիայէն, հրաւիրեց է որ զօրքը դուրս հանէ Արապ-Թապեայէն :

Վիեննայէն Տէյլի թէլէգրամֆի ուղղեալ տեղեկութիւն մը հետեւեալ կերպով կ'ըսատէր թէ փոխարինական պահանջման տեղի տուող դէպքը :

Ռուսմանական բանակին հրամանատարը, Անկէլէսքի զօրապետը, Պուքրէշէն ստացած հրամանագրէ համեմատ, կ'սկսի հրաւիրել Արապ-Թապեայի ուստի հրամանատարը, որ իրեն յանձնէ յիշեալ ամրոցը, իսկ Ռուս հրամանատարը մերժելով այս հրաւերը, այն ատեն Ռուսման հրամանատարը իր զօրքերը կը համախմբէ և փնտրական շարժման այնպիսի ցոյց մը կընէ, որ Արապ-Թապեան գրաւող Ռուսական պահակաուղղը կ'ստիպուի ամրոցը պարպելով դուրս ելնել, զի եթէ ընդդիմութիւն բնէր՝ Ռուսները յարձակմամբ պիտի առնէին դայքը, ինչպէս զիջող պատերազմի մէջ :

Այս իրողութիւնը պատճառէր որ թաթլէպէն զօրապետը իւր թէթլէպէնի կառավարութիւնն ալ փոխադարձաբար հրաւեր մը կուղղէր Ռուսմանիոյ կառավարութեան, ծանուցանելով թէ՛ Ռուսաց ձեռքէն Արապ-Թապեանի ամրոցը առաջին բռնութեամբ առնելը նախատինք և թշնամանք մը համարուելով Ռուսական բանա-

կին, այդ թշնամանքին փոխարինական հատուցումն ընելու և ներումն խնդրելու է Ռուսմանիոյ կառավարութիւնը, միանգամայն և Արապ-Թապեան ալ պարպելով ու Ռուսաց յանձնելով, ապա թէ ոչ Ռուսք ալ զինուորութեամբ դայքը ետ առնէր, լու պիտի ստիպուին, ինչպէս ըրեր էին Ռուսները :

Ասի Ռուսիոյ կառավարութեան կողմէն Ռուսմանիոյ ուղղեալ տեսակ մը վերջնապէր կը համարուէր, որովհետեւ Ռուսները տակաւին չգիտցուի, թէ պէտ կարծողներ շատ կան թէ Ռուսմանիա զինուոր պիտի ընէ վերջնապէս Ռուսիոյ :

Արապ-Թապեանի խնդիրն ալ ծագած էր Ռուսիոյ և Ռուսմանիոյ մէջ տեղի սահմանագիծը որոշելու պաշտօն ունեցող յանձնաժողովոյ մէջ եղած անհամաձայնութենէ մը : Սոյն յանձնաժողովոյ բոլոր անդամներն ալ բաց ի Ռուսալիկէն, կըսէին թէ սահմանագիծը Սիլիսթրէէն կէս մղան հեռուէն պէտք է անցնի, մինչդեռ Ռուս անդամը կ'պահանջէր մինակ՝ թէ սահմանագիծը պէտք էր այնքան հեռուէն անցնի, որ Արապ-Թապեանի ամրոցին և սահմանագիծին միջև զրկելէ 17 մղանի չափ տեղ մնայ : Արապ-Թապեանի փոքրիկ ամրոց մնէ Սիլիսթրէէն կէս մղանէն քիչ մը աւելի հեռու, որոյ այս կարեւորութիւնն է խնդրոյն այսքան ծանր կերպարանք մը տուող բանը :

Երէկուան Պուքրէշի հեռագիր մը կ'ըստուցանէր թէ, ի պատասխանի Ռուսիոյ այն ըստ պաշտապետաց՝ որ եթէ Ռուսները զօրքը յիշեալ ամրոցը չթողու, Ռուսիա զինուոր զօրութիւն գործածելու պիտի ստիպուի, Ռուսմանիա յայտնեց թէ՛ ինքը յօժար է Արապ-Թապեան պարպել եթէ Ռուսիա ալ խօսք կը

տայ թէ՛ ինքը դոյն զրաւելու չպիտի երէ, մինչև որ մեծ տէրութիւններն այդ մասին տան իրենց վերջնական որոշումը :

Չգիտցուի թէ Ռուսիա այս պատասխանին վրայ, ինչ գիրք բռնած է :

ԿԻՊՐՈՍԻ ՎՐԱՅ

ՄԱՐԳԱՐԵՆԻՍԻՆ ՄԸ

Սըր Հէնրի Բաուլինսըն, վերջերս Լոնտոնի աշխարհագրական ընկերութեան մէջ հայրուսի վրայօք խօսելով, ըսեց թէ «մինչև ցարդ դեռ չկատարուած մարգարէութիւն մը՝ վերջնապէս նախատեսած է Միջագետաց հովտին համար, այն տէրութեան կողմէն՝ որ Կիպրոս կղզոյն կ'սիրէ » :

Հետագայի բնոյ, կըսէ Մէսէնճըրի մէկ թղթակիցը, զիտնալ թէ ինչպիսի մարգարէութիւն մ'էր այդ, երբ դիպուածով ձեռքս անցաւ տակէ 14 տարի առաջ Լոնտոնի մէջ հրատարակեալ աշխարհացոյց տախտակ մը, որ վրան մակագիր ունէր սա բառը «ԵՐԱՉՄԸ» : Այս քարտէսին վրայ խել մ'երեւակայական սահմաններ գծուած կերէին, որոց մէջ Միջագետի երկիրն ալ իրեւ անդրկական սեփականութիւն մը ներկայացուած էր, և լուսանցքին վրայ ալ հետեւեալը գրուած :

«Վիկտորիա Ա. — Թագուհի Մեծին — Իրիտանիոյ և Իռլանտայի Միացեալ-Թագաւորութեան, Հնդկաց և Միջագետաց, Կատանայ Կիպրոս կղզին և Եփրատ գետին ոռոգած երկիրը, որ Հնդկաստանի անգղիական կղզեաց ամենէն կարճ ճանապարհն է » :

Ասով հանդերձ, սոյն փոփոխութիւնն և ուրիշ խել մը մարգարէութիւններ պարունակող յիշեալ աշխարհացոյց տախտակը, աւելորդ է ըսել թէ յը-

նորական ու երեւակայական բան մնէ, որ ունէ լրջամիտ քաղաքագէտ մը անարժան կ'համարի ատոր խօսքն անգամ ընելը :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

Նախորդ աւուր թերթով Անդրիոյ մէջ տիրած առևտրական տագնապը, գործառնուած թեանց դադարումը և ասոնց պատճառներուն վրայ՝ մէկ քանի երևելի մարդոց յայտնած կարծիքներն յառաջ բերինք : Այս անգամ ալ ուրիշ ուսումնադէտի մ'այս մասին յայտնած գաղափարը կ'աղծք յառաջ բերել :

Յիշեալ ուսումնական տրեստեագէտը ներկայ առևտրական տագնապին վրայ տեսեալ մը հրատարակելով, կըսէ թէ՛ առևտրական տագնապը իր պատահական պատճառներէն զատ, կանոնաւոր և բնական պատճառներն ալ ունի, որոնք տասը տարին անգամ մ'երևան ելնելով, սոյն առևտրական տագնապները յառաջ կ'բերեն, եւ ատոր օրինակ ցոյց կ'տայ 18րդ դարուն մէջ 1753ին, 63ին, 72ին, 83ին և 93ին պատահած, ինչպէս ներկայ 19րդ դարուն մէջ 1815ին, 25ին, 36ին, 47ին, 57ին և 66ին տեղի ունեցած առևտրական տագնապները : Ուստի և հիշեալ կը կեդրակացնէ թէ՛ առևտրական տագնապներն ալ երկրիս ամեն կողմը ներգործող ժամանակին պարբերական փոփոխութեանցը կապուած է :

Առևտրական գործառնուած թեանց մէջ օգտերաւութեան ու թեան ինչ գործ ունենալը տակաւին չկարենալով ըմբռնել, թէ պէտքստոյգ է մէկ կողմէն թէ՛ ուր որ առատ հունձք ըլլայ՝ հան գործն ու հարստութիւնը կ'շատնայ, և ուր որ երաշտութեան հունձք ըլլայ՝ գործերն կ'դադրեն և աղքատութիւն կը

տիրէ, բայց ըստ մեզ ամենէն
գլխաւոր պատճառը սա՛ լինել
կերելի թէ՛ Անգղիոյ մէջ աշխա-
տութեան ժամուց կարճութե-
նէն և գործաւորաց վարձուց
աղուծնէն, անդղիական ձեռ-
արուեստներն ու բերքերն ու-
րիշ երկրներու արուեստական
ու արտադրելի բերքերէն գնոյ
մասին ետ ու վար կ'մնան կոր:

Թայմի հետեւեալ մէկ դի-
տողութիւնը բաւական է հաս-
տատել մեր այս ըսածը:

Ամերիկայի բերքերն ու
ձեռարուեստք սկսած են, կը-
սէ, այնպիսի կերպով մը եւ-
րոպական հրապարակներն լեցը-
նել, որ մտատանջութիւն պէտք
է պատճառէ, Ամերիկայի հան-
քածուիւր ճինէ վրայի մէջ Թո-
նոն 50 ֆրանքի կ'ծախուի, ու
բնն որ Ֆիլադելֆիայէն Մարսի-
լիա ծովու փոխադրութեան,
և Մարսիլիայէն ալ մինչև ճի-
նէ վրա ցամաքի փոխադրու-
թեան ծախուցը հակառակ,
դարձեալ միւսնոյն գնով ծախ-
ուած գաղղիական և գերմանա-
կան հանքածուիւրներէն ալ ըն-
տիր և յաւաքոյն է տեսակաւ:

Թիւս կողմանէ դարձեալ
ճինէ վրայի մէջ Ամերիկացւոց
նոր հնարած շոգեկառքի մը
փորձը կընեն եղեր, որն որ
վալէի մէջ նոր գտնուած հան-
քածուի մէկ փաթէ և որո-
շէն յարմարիւ եւրոպական միւս
շոգեկառքերը: Ասկից գատ,
կըսէ Թայմը, Ամերիկայի շոգե-
կառաց հնոցներն ածուի խը-
նայողութեան համար այնպիսի
սքանչելի դրութեամբ մը շին-
ուած են, որ երթալով քիչ
քիչ ամերիկեան այդ դրութիւ-
նը եւրոպական շոգեկառաց
արդի շինուածոց դրութեան
տեղը պիտի անցնի:

Ա. գլխի ծովային գործոց
նորաշէն պաշտօնարանին կըզ-
պանքները Ամերիկայէն բերել
տրուելուն վրայ, երբ լրագրաց
մէջ խնդիր կըլլայ, ծովային
պաշտօնէութիւնը կ'պատասխա-
նէ թէ՛ Ամերիկայի կղզանքնե-
րն Անգղիոյ մէջ շինուածներէն
թէ՛ աւելի ընտիր են և թէ՛ ա-
ւելի ածան, և կ'յաւելու բոկ
թէ՛ Ամերիկացւոց ձեռարուես-
տիցը սոյն գերազանցութիւնը,
որ ժամագործութեան մէջ ալ
սկսեր է տեսնուիլ, աւելի այն
բանէն յառաջ կ'գայ որ՝ Ամե-
րիկացիք մարդկային ձեռաց
տեղ՝ կանոնաւոր շինուած ճըշ-
գիւ գործող մեքենայներ կը
գործածեն ձեռարուեստական
նիւթեր շինելու համար:

Ինչ որ ալ ըլլայ, այժմու ա-
ռեւտրական սոյն տաղնապը
մեծապէս մտածել տալ սկսած
է Անգղիոյ, թէ ինչպէ՛ս գորա
առաջը պիտի առնուի:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Դ.

Ս. ՊԱՏՐԻԱՐԻՆ

ՀՐԱԺԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Ս. Պատրիարք Հօր հրաժա-
րականի մասին, ի դիմաց խա-
ռըն ժողովոյ՝ անցեալները առ-
բարձր. Մեծ Եպարգոսն ներկա-
յացող խառն Պատգամաւորու-
թիւնը՝ հետեւեալ տեղեկագիրն
մատոյց այս ուրաթ աւուր
երեսփ. Ազգային ժողովոյ, զոր
հարկ կ'համարիմք իւր ամբող-
ջութեամբ յառաջ բերել:

«Վսեմաշուք Առնեապետ
բաշա Ազգ. ժողովոյ»:

Ազգային պատկառելի ժո-
ղովոյդ նախորդ նիստին, մէկ
քանի իրերստիւն տեսարց կող-
մանէ առ կեդրոնական վարչու-
թեան խառն ժողովն եղած
հարցման ի պատասխանի, կը
փութամք արդ առ Բարձրա-
պատիւ Մեծ Եպարգոսն ներ-
կայացած խառն ժողովոյ պատ-
գամաւորութեան՝ Նորին բարձ-
րութեան հետ ունեցած բա-
նակցութիւնն ամբողջ մատու-
ցանել Ազգային պատկառելի
ժողովիդ, որ է.

18 Յուլ. 1879

Նորին բարձրութեան Մեծ
Եպարգոսին Ազգային վարչա-
կան կազմութեան վրայօք բրած
ինչ ինչ հարցմանց վրայ պատ-
գամաւորութիւնը տեղեկու-
թիւն տուաւ թէ՛

Հայոց Ազգ. բոլոր թուր-
քիւսեակ Հայերէն բնակեալ ե-
րեստիւններէ կազմուած ընդ-
հանուր ժողով մ'ունի. այս ժո-
ղովէն կ'ընտրուին կրօնական և
ֆաղաքական ժողովները, ինչ-
պէս նաև Պատրիարքը, որ կը
նախագահէ այս ժողովներուն:

Պատգամաւորութիւնը.—Հա-
յոց Պատրիարքարանի խառն
ժողովոյ կողմանէ յանուն Ազ-
գին Չեր բարձրութեան կ'ներ-
կայանայ պատգամաւորութիւ-
նըս այսօր յայտնելու համար
թէ՛ Հայոց ազգը՝ ինչպէս ան-
ցելոյն նոյնպէս և ներկայիս մէջ
զանազան հարստահարու-
թեամբ կ'տառապի և կ'չար-
չարուի, և որք հեռագետէ
բազմապատկուելու վրայ են:
Այս չարեաց անմիջական դար-
մանը ի գործ չդրուելով վեր-
ջին օրերս աղետաբեր վիճակ
մ'առած ըլլալուն համար է որ
Հայոց Պատրիարքը հրաժարած
է իւր պաշտօնէն, և յնախագա-
հէր կրօնական և ֆաղաքական
ժողովներուն. և հետեւապէս և
Ազգին գործերն ալ երեսի վը-
րայ մնացած են, ժողովս կու-
գայ իրաց այս վիճակը Չեր
բարձրութեան ներկայացնելու,
Հայաստանի մէջ տեղի ունեցած
զեղծմանց և գործուած հարստ-
առահարութեանց անմիջական

գարմանը խնդրելով հանդերձ:

Եպարգոս.—Շիտակն բոկու-
համար թէ մէկ կողմէն և թէ
միւս կողմէն շատ բաներ կըսեն
ինձ. դժբաղդաբար թէ մին և
թէ միւսը չափազանցութիւնե-
րով լեցուած են, Ես թէ և նոր
եկած եմ այս պաշտօնին և կա-
տարեալ տեղեկութիւն մ'ունե-
նալ այս բաներուն վրայ շատ
դժուար է ինձ համար, սակայն
ես պաշտօնեայ մ'եմ որ ամեն
հասարակութիւն հաւասար նը-
կատելով ամենուն հանգստու-
թիւնը և բարելաւութիւնը հա-
ւասարապէս պիտի մատակարա-
րեմ, իմ ճիգերս պիտի պսակ-
ուին, իրաւ որ չեմ գիտեր,
բայց սա պէտք է դիտնալ որ՝
ասանկ ծանր ժամանակի մը մէջ
այս երկրին Օսմանեան ամեն
կարգի հասարակութիւնները
կուզէ Հայ ըլլալ կուզէ Արաբ
կուզէ Թուրք ևն. պարտաւոր
են կառավարութեան ջանիցը
օգնել և ոչ թէ՛ դժուարացնել.
դժբաղդաբար ինձ տրուած տե-
ղեկութիւններն այնպէս կ'ցուց-
նեն թէ՛ Հայոց ազգը որ դա-
րաւոր հաւատարմութեամբ
միշտ օգտակար հանդիսացած է
Օսմ. Պետութեան, սոյն միջոցին
չեղած է այս շաւղէն, ինչպէս
ուրիշ օսմանցիներ ալ, և կ'դիմէ
օտար աղբիւրներու և անոնցմէ
չա՛հ կըսպառէ. օտարը ինչ կըր-
նայ բնել, օտարը իւր շահե-
րուն համեմատ կ'գործէ, իւր
շահերուն համեմատ կ'թելադրէ
զմին կամ միւսը: Պէտք է գիտ-
նալ Հայոց ազգը, որ օտարնե-
րուն ամենն ալ համաձայն չեն
Օսմանեան կայսրութեան օգտի-
ցըն ու շահուցը. ուստի պէտք
է անոնց գործիք ըլլալ, այլ
ընդհակառակն պէտք է գիտ-
նալ թէ՛ այս աղետից դարմանը
օսմ. կառավարութիւնը միայն
պիտի կրնայ ի գործ դնել, ու-
րուն ամեն կարգի հասարակու-
թիւնք պէտք է գործակից ըլ-
լան, որպէս զի կառավարութեան
գործը զիւրանայ. այս նպա-
տակաւ ահա երկու գոմիսիօն
կարգեցի մէկը եւրոպական ճաճ.
կաստանի համար, որուն նախա-
գահը քրիստոնէայ բաշայ մ'է,
և միւսը Ասիական տաճկաստա-
նի համար, որուն նախագահը
հարուստ և արդարապէս տա-
ճիկ բաշայ մ'է. ասոնց լիազօր
իշխանութիւն պիտի տամ որ
մանրակրկիտ կերպով այդ չոր-
եաց պատճառները քննեն և
հեղինակները գտնելով, անմի-
ջապէս և առանց աշխուժեան
պատժեն, և այն բաները որոց
քննութիւնը կեդրոնին վ'վերա-
բերի, պիտի տեղեկագրեն մեզ
Ասիական ճաճկաստանի հա-
մար կազմեալ գոմիսիօնը Հայէ-
պէն սկսելով ճիարպէքիւր և Աս-

սիոյ այլ կուսակալութիւնները
պիտի պաշտի. հոն ձեր Ազգի
ալ առիթ կունենայ իւր ամբողջ
ցաւերը փաստ ի ձեռին ներ-
կայացնել և դարմանը պահան-
ջել. փաստ է ըլլալով որ յանցա-
պարտք իրենց պատիժը պիտի
կրնն. ձեր եպիսկոպոսներն, ե-
րեսիները, Ազգային պաշտօնա-
կան մարմինները նոյն գոմիսիօ-
նին կրնան տպագային բարեօք
կառավարութեան միջոցներն ալ
առաջարկել, զի քննիչք պար-
տաւոր են զանոնք մտիկ ընել.
բայց սոյս բռնեցը, ինչպէս կը
տեսնէք, դիւրին չեն անմիջա-
պէս գործադրել. և դարաւոր
զեղծումները քիչ միջոցի մէջ
բառնալ. ուստի բսէք Հայոց
ազգին որ համարէ և օգնէ
մեզ մեր այս դժուարին պաշ-
տօնին մէջ, Հայոց ազգը պէտք
է յիշէ որ այսչափ դարեր Օս-
մանեան Տէրութեան հովանաց
ներքե իւր Ազգութիւնը և իւր
ամենաւաւագութիւններն ու սո-
վորութիւններն անվթար պա-
հած է, պատմութեան մէջ դժ-
ուարին է գտնել այնպիսի Տէ-
րութիւն մը որ այս նուիրական
բաները այսչափ պահպանած
ըլլայ:

Պատգմ. — Հայոց ազգը
առ Օսմանեան պետութիւնն իւր
դարաւոր հաւատարմութիւնը
անվթար պահած է և կ'պահէ.
օտար ներշնչութիւնք բնաւ չեն
ներգործեր իրեն. իւր բաղդը
կուզէ ձեռք բերել Հայաստանի
մէջ և այն՝ օսմանեան դրօշին
ներքե. Հայոց ազգը օսմանեան
կառավարութեան բարենպա-
տակ ձեռնարկութեանց օգնած
է միշտ, հարստահարութեանց
դարմանը և զեղծմանց բար-
ձումը պահանջեն իսկ այսօր,
ինչպէս յայտնի է Չեր բարձ-
րութեան, օգնութիւն մե՛. սա-
կայն ցաւալի է բոկ որ Հայաս-
տանի այլեայլ գաւառներու մէջ
ինչպէս են վան, Խարին, Տիար-
պէքիւր, Սեփաստիա ևայլն տե-
ղի ունեցած զանազան հարստ-
առահարութիւնք տակաւին կը
չարունակուին, ասոնց դարմա-
նին և յանցապարտներուն ա-
նաչառապէս պատժուելուն հա-
մար շատ անգամ գոմիսիօններ
կազմուած և նախորդ եպար-
գոսներէն խոստումներ եղած
են. սակայն այս ամենը արդիւնք
մը չեն արտադրած և իրաց վի-
ճակը ինչ որ էր, նոյնը մնացած
է ցայսօր, մանաւանդ աւելի
վատթարացած. ասոր համար է
որ Պատրիարքը յառաջ անցած
է իւր թախանձանաց և պա-
հանջմանց ձևին մէջ, որպէ՛ս դի-
կարող ըլլայ ժողովուրդը առ-
վըրդով պահել. սակայն երբ
մինչև ցայս կէտ արդիւնք մը չը
տեսաւ, հրաժարեցաւ իւր պաշ-
տօնէն և գործելէ քաշուեցաւ:

այս կացութեան մէջ խառն ժողովին դժուարին է գործել, եւ թէ տակաւին իրաց այս ցաւաւի վիճակը շարունակէ, և անմիջական դարման մ'ի գործ դրուելով արգիւնքը երեւան չը գայ: Հայոց ազգը գիտէ համբերել և ընդ երկար համբերած է, ինչպէս յայտնի է Ձեր բարձրութեան, սակայն և այս յայտնի է թէ՛ համբերութիւնն ալ չափ մ'ունի, արեւմտի բազմացած են այս վերջին ժամանակներս զեղծմանց և հարստահարութեանց երեսէն Հայոց ազգին վիշտն ու տառապանքը, որ տղիւս չկրնար տակաւ հետեւապէս և համբերել, նա մանաւանդ առաջարկեալ պայմանները չեն կրնար ակնկալել տալ այն հաստատ յայտ թէ՛ արդիւնն աւարտ կրնայ պիտի կատարուին, զի, ինչպէս բոլոր, շատ անգամներ այս օրինակ դարմաններու համար խոստումներ եղած, բայց անգործագրելի և անպարզին մնացած են: Հայոց ազգը անմիջական դամանի գործադրութեամբ արդիւնք մը տեսնել կ'սպասէ:

Զարուակել

ՇԳԵՂ ՊԱՐԱՀԱՅՆԴԵՍ

Ի ՆՊԱՍՏ

Աւագին Հեռագրային Հայոց

7/18 փետր. 1879

Չորեքշաբթի գիշեր ժամ 4 1/2

ՅԵՆՏՈՐԱՏՈ Ի ԲԵՐԱ

ԱՆԳԱՄԲ ԵԱԶՆԱԾՈՂՈՎՈՑ

- Վսեմ: Մարտիկ Սիմոն պէյ
- Նախագահ
- Մեծ: Մանուկեան Սէնէթերիմ
- Էֆենտի Գեր-Նախագահ
- » Եստուֆեան Տիգրան էֆ.
- » Բարաուզար
- » Նարառուկեան Յարութիւն
- » Էֆենտի Գաւազան
- » Մէլիսեմ-Գալի Յարութիւն
- » Էֆենտի Բենիկ
- Մեծ: Բարաուզան Տիգրան էֆ.
- » Գալիսեան Պոպիկ
- » Գարակոզեան Գրիգոր
- » Գրիգորեան Ռուբէն
- » Էդիսայեան Գարրիէլ
- » Թաչեան Սարգիս
- » Թիւրպեան Սահակ
- » Միլիսեմեան Պետրոս
- » Բարաուզան Կարապետ
- Մեծ: Եւսէպիան Եղիա էֆ.
- » Կարապետ
- Մեծ: Պէյրեան Եղիա
- » Սէլիմիէեան Գրիգոր
- » Սերոֆեան Յարութիւն
- Վսեմ: Սէլիմիէ
- Մեծ: Սիմոնեան Սարգիս
- Վսեմ: Սուրենեան Յովհաննէս
- Մեծ: Տէրունեան Յակոբ
- » Յերարդեան Յարութիւն

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Անգղիոյ վերջին հասնողը

րամագիտական թերթերն շատ անկապաւ կ'իստին թօքվիլի ծրագրին վրայ Այս պարագային բաւական է բացատրելու թէ յիշեալ ծրագրին ընդունուելուն հակառակ ինչո՞ւ համար օսմար թէթերթերն լոնտոնի հրապարակին վրայ յարգ չեն տա: Նայ: Այս մասին վաղը քիչ մը աւելի ընդարձակօրէն պիտի խօսիմք:

—Տճկ. թերթ մը կ'հաւատաւ թէ թէ՛ Բուսէլի բանակին յաւաքապահ գունդերը, այս բշօր խորնէ մտեր են, զոր թողեր Ռուսը, և Չորլուէն սկսեալ օսմար թէթերթ բանակը սկսեալ է դէպ յառաջ քաշել: Հետեւեալ դշօրն ալ Սէլամի բաշա իր հրամանատարութեան տակ գտնուած ժողովը զօրաբանակովը միտեղ էտրնէ մտեր է:

Վաղըթ յայտարարութիւնով կ'ստէ վերոյիշեալ լուրը, և կըսէ թէ ատի նոյն թերթին հնարած շինծու լուրն ըլլալու է:

—Բերայի Զ. շրջանակի թաղապետութիւնը, հարկ եղած հասարակային շինութեանց նորոգութիւններն ընելու համար 20-000 ոսկի խնդրելով Բաղաքապետութեան, ալս վերջինն ալ 10-000 ոսկի տալ որոշեր է:

—Ռերթ օր Բերայի թաղապետութեան հարկ եղած 3 սոյլ մարթած կողմ միւս բնաներ են, որոնք Օսմայէն բերութեան ծախելու կ'տարուէին: Երկու բժշկաց քննութիւն մ'ընել տալով, հաստատուելուն վրայ թէ այդ մանր աւրուած ու հստած են, իսկոյն մաքուաններու մէջ բնուցուելով կը տարուին Սարայ Պուրնոյի բացը ծովը կ'նետուն:

—Ճէրիտէի Հովատիս կըսէ թէ՛ կառքերուն և գահաւորակներուն (սեթեա) վրայ Բաղաքապետութեան որոշած ու գրած սակագինը անգործադրելի մնալով թէ կառապաններն և թէ Կիւսէ-Էրն ուղած գիններին կ'առնեն կոր, և երբ նոր սակագինը կ'առարկուի իրենց, կ'պատասխանեն եղեր թէ՛ այդ սակագինը Բաղաքապետութեան տակաւին պաշտօնապէս իրենց չէ հաղորդուած, և եթէ հաղորդուած ըլլալ իսկ, Բաղաքապետութիւնը առաջ թող գարիին զինը իջնցնէ և ապա կառքերուն վերայ սակագին դնելու եղնէ:

—Կ'հաւատան թէ եթէ Յունաստանի սահմանադրուող խնդիրը գոհացուցիչ վիճակ մը գտնէ, գաղղ. զեւպան Պ. Ֆուրնիէ ալ քիչ մ'ատենի համար Բարիզ պիտի ուղեւորի, Ծերակուտի ժողովոյ նիստերուն մասնակցելու համար որոյ նոր անդամ ընտրուած էր:

—Անգղ. Էկզէմպիլը թեր-

թը կ'ծանուցանէ թէ Բլէյքայի գիւցալն Սքոպէլէֆ զօրապետը Ռուսիոյ խաղաղ նահանգին կառավարիչ և հրամանատար պիտի անուանի:

—Օսմայի ռուսական զորքերուն, որք շաբաթը 2 անգամ կ'մեկնէին ասկէ, բշօր երբ, այսուհետեւ մինակ մէկ անգամ բշօր երբ պիտի մեկնին, վաղուան եշաւուր մեկնումը վերջինն ըլլալով:

ՀՆՈՒԱԳՐԱԼՈՒՐՔ

Բէշթա 17 փետր.

Երեսփ. ժողովին մէջ Գանձուց պաշտօնեայն պիւճէին վիճակը բացատրելով, հաւատարակչութիւնը գտնելու միջոցներն ալ ցոյց տուաւ, բնկով թէ պէտք է որ Պոսնայի գերաւման ծախքը նուազի, նոր ծախքը դուռ բացող ուէ գործէ ետ կ'եցուի, ինչպիսիք թիւն ըլլալ, անուղղակի տուրքերն առեւցումն և նոր տուրքեր դրուելն: Ապա պաշտօնեայն բանակին խնդրոյն վրայ խօսելով ըսաւ թէ՛ ատի չկրնար սակ իբր գանձային տեսակետի տակ ներկատուի, ալ թէ այդ կէտին վրայ պիտի վիճարանուի զինւորական օրէնքը երկարացնելու խնդրոյն առթիւ:

Լոնտոն 18 փետր.

Կառավարութիւնը ծանոց խորհրդարանին թէ Կիպրոսի բնակիչներն այսուհետեւ անգղիական օրէնաց պիտի հպատակին:

Կ'կարծուի թէ Լորտ Նա. Բիլը տը Մակտալա՝ Բարեյուսոյ (Բաֆրաստանի) անգղ. զօրաց բանակին բնդհանուր հրամանատար պիտի անուանի:

Այս առաջ հասն

Վիէննա 18. — Երեսփ. ժողովին մէջ պաշտօնէից գահն. րէցը հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ: — Կառավարութիւնը Պիլիքի դաշնագրին հիմն ընելով, կ'ճանչէ թէ իր պարտքն է Գոնկրէէն իրեն համար յառաջ եկած գործը կատարել վերջին ծայր խնայողութեամբ, սահմանադրական կընճիւղներուն առաջին առնուլ, և կարելի եղածին չափ խոյս տալ նորանոր զոհողութիւններէ:

Աղէկոսանդրիւ 18. — Սեւ ծովէն, Ազախ ծովէն, Արշիպէ. դադանն, Թուրքիայէն և Ափ վրկեան Տրիպոլիսէն եկող նաւերուն աղաւթ Բալիկ տալը կը մերժուի:

ԴՐԱՄԱԿԱՆ

Լոնտոն 18. — Բաց 12 1/2

Դոց 12 1/2

Բարիզ 18. — Բաց 12 53

Դոց 12 60

Պուլմար —

Այս առաւօտ բացուեցաւ 13:38

Թղթաղրամ 428:20

Բումէի 49:75

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Գաղղիոյ պաշտօնէից գահն. րէց և Արտ. գործ. պաշտ. Պ. Վատէնկիթօնի Ա. կարգի Օսմանիէի Պատուանշանը շնորհուրէն է:

—Վաղթ տճկ. թերթը, որ 2 ամսուան համար դոցուեր էր 2 օր առաջ, Անգղիոյ զեւպան նին ներողութեամբն ու բարեխօսութեամբը նորէն հրատարակութիւնը շարունակելու հրաման տաւալով այսօրուէ վերտին սկսաւ հրատարակութիւնը:

—Այսօր հրատարակեալ պաշտօնական ազդ. մը կ'ճանուցանէ թէ, փափաքելի էր թէ պէտ որ Բայմէն իր շրջաբերութեան ելած գնովը, այսինքն 115 զըշ. թղթի տեղ 1 օսմ. ոսկի վճարելով ժողովուէր, իսկ առձեռն Գանձու ռենցած գրաւ մը բաւական չըլլալով այդ գընովը քայմէն վերցնելու, հարկ եղեր է որ 400 զըշ. ողջ թղթի տեղ 1 ոսկի վճարելով վերցուի թղթաղրամը, որ հասարակաց այսքան վնասուն պատճառ մը եղած է:

—Թօքվիլի ծրագրին համառոտ նշանակեալ տրոց և հաստութից հաւաքումն ու վարչութիւնը յանձնուելու համար կազմուիլը հարկ եղած խառն վարչական Մասնաժողովոյ Անգղիայի և Գաղղիայի անգամաց ընտրութեանը մասին երէկ Բ. Դրէն հեռագիր սղղուեր է Բարիզի և Լոնտոնի օսմ. զեւպանաց:

—Ռուսիոյ կայսեր մէկ հրովարտակը, Թուրքիոյ հետ հաշտութեան վերջնական դաշնագիրը կ'նքուելուն վրայ, օսմ. բոլոր երկիրները պարպելով թողու կ'հրամայէ:

—Կըսուի թէ Վեհ. Սուլթանը խնդակցութեան զիր մ'ուղեղեր է Պ. Կրէկի, սորա Հանրապետութեան Նախագահ ընտրուելուն առթիւ:

—Անգղիոյ զեւպան Սրբ. Լէյտոն երէկ Վեհ. Կայսերին կայանալով հրաժեշտի ողջոյնը մատուցանելու, այսօր ալ Անգղիա կ'մեկնի գաղղ. չոգ ենաւով:

—Թօքվիլի մարզիղը մայրաքաղաքս դառնալու համար այս երեկոյ կամ վաղն առաւօտ Բարիզէն պիտի մեկնի:

—Թօքվիլի ծրագրին ընդունելութեանը վրայօք Հովատի հեռագրակ. գործակալութեան տակաւին լուսթիւն պահելը շատ հետաքրքրական կերերի:

—Այս գիշեր Պարսից զեւպանաստանը ընտանեկան չընդ պարտհանդէս մը տեղի ունեւորով, շատ մեծամեծ ընտանիքներ ու անձինք ներկայ դըտունուեր են:

—Վաղը եշ. գիշեր ալ Ռուսաց զեւպանաստանը երկրորդ ընտանեկան պարահանդէս մը պիտի տրուի:

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱՐՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԱՆ ԶԱՄԱՐ

Գրեց Հ. Գրիգոր Վ. Դավիթյան
Մխիթ. Ուրսեան

Վերջինս Մխիթ. Տպարան 1879

Բովանդակութիւն.—Միջին ու
Նոր Պատմութիւնը մինչև մեր օրե-
րը հասցընով համառոտ բայց կա-
տարեալ զէպքերն, մասնաւորապէս
աշխ. դպրոցաց գործածութեանը հա-
մար շինուած է.—Հաստ հմուտ զը-
րուութիւն է, ուր յայտնապէս կերկի
գերմանական ճաշակ ու խորունկ
հմտութիւն.—Ասոր արժէքն այնչափ
ուելի մեծ է, որչափ առաջիններէն
մէկն է ազգին մէջ, իբրև դասա-
գիթը Վասն զի թէև կայ հաստ մը
ասկէ 50 տարի առաջ հրատարակ-
ուած, բայց, բաց անկէ, որ զորի է
բոլորովին հաստատուն զրուութիւն,
չատ ընդարձակ բանուած է և Պատ-
մութեան հոգին ու ծուծը թող տա-
լով աւելի զուարեակաց ու զրոյց-
ներու միտ զրած է, որ պատմու-
թեան չէ՝ թէ էական, այլ երկոր-
գական, մասնաւոր թէ երրորդական
մասը կ'իյնայ անհնար յիշատակ
ստիչի ու այլապէս ժամանակ հրա-
տարակուած պատմութիւնները առ-
բող չեն, մասնական են, ուստի իբ-
րև գործածութեան մէջ մասնիկի
զրեք, հասարակութեան ճեղքը
դեռ չեն կրնար արուել.—Ուր թո-
ղունը որ մասնաւորիւ, շատ մաս-
դիւր հայեցումով մ'ըրած է նաեւ
ազգ. պատմութեան, զոր մինչև մեր
օրերը հասուցած է՝ թուականներու
ճշգրտութեամբ Ազգայինք ասոր մէջ
նաեւ սղգ. մասնաւորութեան վրայ
բաւական տեղեկութիւններ:

Մաքուր տպագրութեամբ 296
էջ պարունակող այն գիրքը, համե-
մատութեամբ շատ աժառէ, 2 ֆը-
րանք գնով: Կը ծախուի Վերջինս
Մխիթարեանց գրադատարանին
Բանկալթի և ամեն ազգային գրա-
դատարանաց քով:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱՐԵՎԵԼԻԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Թարգմանեալ է Դավիթյանէն

Վերջին տաճկա—ուսական պա-
տարարման վրայով դադարեցնել ինչ-
աին մէջ մէկ քանի տարբեր հիդի-
նականութեամբ հրատարակուած գոր-
ծերն, տանին անկողմնակալն ու
ճշգրտապատումը Ա. Լ. Յոսի երկն
ընկողմ սորա հայերէն թարգմանու-
թիւնը տետր առ տետր սկընած է
հրատարակուել, Արամեան տպագ-
րութեամբ, մաքուր թղթի վրայ,
մեծագիր և քսածաւ, իւրաքանչիւր
տետրը 2 պատկերօք զարդարեալ:
Սոյն հրատարակութիւնը խոստ
հետաքրքրական և մասնագիտաց
օգտակար գործ մը ըլլալով, կը հը-
րաւորուի յարգող հասարակութիւնը
մէկ մէկ օրինակ ունենալու անկէ,
որով թարգմանին աշխատութիւնն
ուս. խնամքն արդիւնաւորեալն ալ
պատճառ մը կ'ըլլայ:

Ա. տետրը հրատարակուած է
Յի. 28 թին, կեդրոնատեղին է Յը-
րէկեան գրատունը, գին թերթին
1 շաբաթ արժաթ:

ԱԶԳ
ՎԱՃԱՌՈՒՄՈՒՆ
ԶԳԵՍՏՈՒՅ

Յ. ԿՐԱՆՊԱՌՈՒՄ և ԸՆԿ.
ՆԵՐՔԱՆԵ ԳՐԱՐԱՐԵՐԻ ԹԻՆ 70
Ղալաթիա
Վերջինս մէջ չինուած բն-
տիր ապրանքներ կ'ծախուին թէ
մեծ աքանակ և թէ հատով,
գահացուցիչ գիներով:

Լալով, կ'ծախուի Նէնի-ճամբի Զինն-
կերէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղա-
կասեան գրատունը և ուրիշ գրադա-
տարաց քով:
Գին 1 Յրանք

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՏԵՏԵԼԱՆ
ԺՈՁԵՖ ՊԱԼԱՍՄՈ
ԹԱՐԳԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ԷՃ. ԵՆԱՐԱՃԱՆ
Աղէտանգր Տիւմա գաղղիայի
մեծանուն վիպասանին գրէն երաժ-
շոյն գործին ճիշդ այն է վերջին հա-
տուն ալ Եւմբի Տէտեան եղբայր
տպարանէն իւր ընծայուելով Պոլս
հասած է: Այս գեղեցիկ վէպին մէջ
ուր Լուի Ժեյի կեանքը, վարքն ու
վարձանը նկարագրուած են, հետ
զհետէ կ'ընկայանան Վոլթէն եւ
Ռուսո՝ անցեալ դարուն այն երկու
մեծ մարդիկը, թագուն գիտութիւն-
ներ կ'այտնուին, Մասնաւոր օթեակ-
ները օտարին առջև կ'ընդունին: Ա-
մեն կարգի և հասակի մարդ լը
սլրած ներքը հոն կ'գտնէ ևւն:

Կը ծախուի Նէնի-ճամբի Զինն-
կերէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղա-
կասեան գրատունը և ուրիշ գրադա-
տարաց քով:
Գին 2 Ֆրանք 25 սնթ.

ԿԻՅԼՈՒ ԹԵԼԼ
ՈՂԱՐԳՈՒԹ. Ի ՀԻՆԳՐԱՐԱՐ
Թարգմանեալ գաղղիերէնէ
Միշտ Ա. Կիւլաբեան
ԱՆԴԱՐ
Զարտուղարաց գիւնակին

Արտաք. գործոց պաշտօնատան
որ ի Բ. Դուռն
Շիւթեր գերմանացի հոգակաւոր
հեղինակին ընտիր գործերէն մին
եղող սոյն ողբերգութիւնը մէկ հնոց
թղթադրամի կը վաճառուի Վ. Յ.
Մարգարեանի գրատունը Մէքան-
ջարը թիւ 57 և ամեն գրադատա-
րանց քով:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
ՅՈՐԻՆԵՑ Մ. ՄԱՐՈՒՐԵԱՆ

Բազմաձևու Մամուրեան Էֆ. ի
սոյն 120 երեսէ բաղկացեալ Նոր
գործը որ իւր կատարելութեամբ կը
յուսամբ թէ մուտ պիտի գտնէր ու-
ր ազգ. վարժարանաց մէջ, իշխի-
րի Տէտեան տպարանէն հասած ըլ-

ՇԱԳ
ՄՈՒՀԱՐԵՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ
Հեղինակութիւն
ՊԱՐԳԱՆ ՊԵՏԵ

Վսեմ. Վարդան Պէյի գրէն
երաժ. սոյն ընտիր պատմութիւնը՝ զոր
մինչև հիմայ Եւթիմիանը—Էֆեբար
լրագրոյն մէջ մաս առ մաս կը հը-
րատարակուի, այս անգամ կրկին
սրտագրութեամբ թերթ առ թերթ
հրատարակուի սկսած է մաքուր
տպագրութեամբ, և որուն ութը եւ
սեսէ բաղկացեալ մէկ թերթը՝ 2
իսուն փրչնոց և տասը թերթերէ
բաղկացեալ մէկ հատորը մէկ 20 յոց
թղթադրամի կը ծախուի հետեւեալ
տեղերը:

Պոլս իմին Էօնիւ Սուրբ Պողոս
աղայի խնամքը, Պալը—Սիւ ճատ-
տէսի գրադատարանը խնամքները,
Բերայ Մեծ փողոց խալաթանաց
խնամքները, Թարա—Պալի ծխա-
վաճառ Անդրեան աղայի կրպակը,
Թէ՝ Պոլսոյ և թէ Ղալաթիոյ իւրա-
րագրաւաճառաց քով:

Ղալաթիա ԳԵ. 6 Փետր.
ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	14 03
Պոց	13 36
Բարձր գին	14 04
Յած գին	13 35
Թղթադրամ բաց	427 00
բարձր	432 00
ցած	427 00
ժամը 11	430 00
Փոխ. 63ի	Ֆր. 072 00
» 65ի	» 084 00
» 69ի	» 082 00
» 73ի	» 074 00
Դանձատու	25 00
Սօսիթէ Ժէնէրալ	4 22
Սօսիթէ Օթօման	3 00
Պանք տը Բոնսթ.	6 16
Բրէտի Ժէնէրալ	5 15
Թրամիլէյ	1 85
Բում. Երկաթուղի	49 75

ԸՆԹԱՅԻՆ ԴՐՈՐՈՑ
(Ուս. Կի) 100 տէ Կը—1)

Սնդղ. սկի	109 26
Կաղղ.	87 12
Բօլ	89 10
Վարդան արծաթ	16 20
» թղթադրամ	09 00
Բրէլից	51 10
Հինգնոց	24 00
Մէթալիք	24 20
Ճերմակ մէ ճիտ	07 26
Պղինձ	184 20

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՋԱՆ
ԳՏԼՈՒԱՄ
ՈՒ

ՓԱՆԱՍԵ

Կոչուած ցաւի զեղը բուրովին
բուսեղէններէ բաղադրուած ըլլալով
թէ՝ ներսէն և թէ՝ դուրսէն կը գոր-
ծածուի ու բազմաթիւ ցաւեր ու հի-
ւանդութիւններ շուտով կը բժշկէ:
Ինչպէս որ վարը յիշուած է:

Ամեն տեսակ Գոլի, Ըստմոք-
սի, մէլքի կամ Ինդիքնիս ցաւեր-
ու նաեւ Թանջը, Քօլէրա և այլ ա-
մառուան հիւանդութիւններ ունե-
ցողները այս գեղէն խմելու են հե-
տեւեալ կերպով: Կէս գաւաթ ջուրի
մէջ, զիւր ապուրի մը զրգալէն աւելի
չաքար, վրան լինող անուշի զրգալ
մը փանստէ աղէկ մը խառնէ ու
խմէ:

Կոկորդի հիւանդութեանց, և
Աւսեցիի համար զեղը վերայնալ
կերպով պատրաստէ ու ժամը կամ
երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ
երկու անուշի զրգալ այն բաղադ-
րութիւնէն խմէ: Զօղացաւի, Բիւմա-
թիլմի, Ուքի ցաւի, Ստամոքսի սկ
տեսակ տեսակ կեանակի ցաւերու հա-
մար գորսէն փանստէ քսելով աղէ-
մը շիւղուէ է: Այլապի ցաւի համար
քիչ մը բամբակ փանստէ մէջ
թաթիլելով ցաւած ակուսիլն վրայ
դնելու է:

Ամեն տեսակ երրորդ ցաւի մը հա-
մար գորսէն փանստէ քիչ հարկ
կըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւեւ-
ի շուտ ըմբոստիւ կըլլայ:
Բարձրոց սրտուած կամ ճմուռ-
ած տեղերը թշնկու համար վրան-
զը պատահածին պէս փանստէին
վրան աղէկ մը լեցնելու է: Գոռա-
կով ևւն. կտրուած վերքերը թշնկե-
լու համար՝ արիւնը շարած շուտով
մը վերքը կապելու և կապին վրայէն
Փանստէ լեցնելու է մինչև որ լաւ մը

թրջի փանստէն նաեւ արեան շրջա-
նը նարագանջէ ու բոլոր բնութիւնը
կը զօրացնէ:

Այս գեղին օգտակարութեանը
վրայ երկարօ էն գրել աւելորդ կը
համարուի, գործածողները զայն
միշտ կը գոլին, ուզողը կրնայ ան-
ձամբ փորձել. գինն աժառէ է: Կը
ծախուի Միւնստեան և Ընկերաց Ս-
մերկեան վաճառատունը որ ի Ղա-
լաթիա կ. Պոլսոյ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵՐԿՈՏԱՍՆԱՆ ԿԵՍԱՐԱՑ
ԳՈՐԾ ՍՈՒԵՏՈՂԻՈՍԻ
ԹԵՂԵՆԵՆԵ Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ-
ն վերջին հատորն ալ իշխի
Տէտեան եղբայր տպարանէն
իւր ընծայուելով, կ'ծախուի
Նէնի-ճամբի Զիննկերէր ճատ-
տէսի թիւ 2 Ս. Ղալաթեան
գրատունը, և ուրիշ գրադա-
տարաց քով: Գին 1 Ֆրանք 25
սնթիւմ:

ԲԱՆԱԼԻ
ՀԱՅԵՐԵՆ ԵՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԳՐԵՑ

Մ. ՄԱՐՈՒՐԵԱՆ

Ահաւանի գեղեցիկ միւրոտ մը
Մամուրեան Էֆ. ի աշխատարան-
ութեամբ մուտ գտնելով մայրենի լեզ-
ուի ուսման մէջ, կ'աւանդորդէ ա-
շակերտները շարադիր լինելու, չըս-
պասելով որ անոնք քերականութեան
տաղտկալի շրջանէն անցնին:

Այս գրքիցը Զմիւռնիոյ Տէտե-
ան եղբայր տպարանէն իւր ըն-
ծայուելով կը ծախուի Նէնի-ճամբ
Զիննկերէր ճատտէսի թիւ 2, Ս.
Ղալաթեան գրատունը և ուրիշ գը-
րադատարանաց քով: Գին 50 սնթիւմ:

ՆՈՐ ՕՐԱՅՈՅՑ
1879

ԹՈՒԱԿԱՆԻ ԲՐԻՍՏՈՍԻ

Կ'ծախուի գին 20 փարա մէճիտ

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
1879

ԹՈՒԱԿԱՆԻ ԲՐԻՍՏՈՍԻ

Գին 40 փարա մէճիտ

ՏԳԻՐԻՆԻ ԶԳԵՐԵՆԵ
15 կնիդանալի պատկերներով

Զարգարեալ սոյն ընդգծակ օրացոյցը
բաց ի բուն օրացոյցէն կ'պարունակէ
նաեւ վերջին Ռուսո—Տանկական պա-
տերազմին համառոտ պատմութիւնը,
ասոր շարադրական ամենակարեւոր
գիտելիքներ, բարոյական սկզբունք-
ներ, խոյթ ման և արածի դեղեր,
միասակար ճճիներ չնչնու կերպեր:
Ասոնցմէ զատ ազգային նշանաւոր
բանաստեղծ Քամաւ Գաթիկայի
«Հայերու թաքը» վերնագրով մէկ
չնախարհիկ ոտանաւոր:

Կ'ծախուի Զարգարեան վաճա-
ատունը, Սուրբ Զամա փողոց,
Աշոր Էֆէնդի խանի գիւմաց, թիւ
12 և գրադատարանաց քով:

ՏԵՐ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՊՈՂՈՍ ԲԻՐԻՇՃԵԱՆ
Ղալաթիա Բէրլէնպէ—Բա-
զար Պաքըր փողոց թիւ 12: